

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՏՈՒԳՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ՀՀՀՌ-ԲԸԱՀԾՁԲ-04/17»**

ք. Երևան

«07» փետրվարի 2017թ.

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ-ն, ի դեմս աշխատակազմի ղեկավարի՝ Շ. Վարդանյանի, որը գործում է հտրիրդի նախագահ Ռ. Ջաղինյանի կողմից 28.12.2016թ. արձակված N 54 հրամանի հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կարկոմավտո Սերվիս» ՍՊԸ ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Հովսեփյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՄՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների տեխնիկական ստուգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 800,000 (ութե հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման համար Պատվիրատուն Կատարողին վճարում է «ՀՀՀՈ-ԲԸԱՀԾԶԲ-04/17» ծածկագրով մրցույթի շրջանակներում Կատարողի կողմից «06» փետրվարի 2017թ. ներկայացված գնային առաջարկով սահմանված համապատասխան ծառայության գնին համապատասխան: Կատարողի կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 1-ում և հանդիսանում է դրա անբաժանելի մասը:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջներ պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՔՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ուղեվական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործունային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.4 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այլ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այլ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն անրոզությանը կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է [www.gnumner.am](http://www.gnumner.am) հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է 24 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն ՊՀ

ք. Երևան, Ալեք Մանուկյան 5

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011430163

Խ/Խ 01539597

Էլ. փոստ [gnumner@cptvrc.am](mailto:gnumner@cptvrc.am)

Աշխատակազմի ղեկավար՝ **Վարդանյան**



### ԿԱՏԱՐՈՂ

«Կարկնավառ սերվիս» ՍՊԸ

հասցե՝ Տիգրանյան 1 փակուղի 1

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ

Հ/Հ 1570021706190100

ՀՎՀՀ 00131374

Էլ. Փոստ՝ [stokarcocomauto@rambler.ru](mailto:stokarcocomauto@rambler.ru)

Տնօրեն՝ **Ա. Կոլսեմյան**



### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ավտոմեքենաների տեխնիկական ստուգման՝ SU-1(տեխնիկական գնման /դիագնոստիկա/), SU-2 (վերանորոգման), ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քայլուղերի և այլ օժանդակ նյութերի

- 1 Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/՝ 4x4 տիպի Շևրոլե-Նիվա 2 հատ, և BMW 523i 1 հատ
- 2 Չափաբաժինը՝ 1
- 3 SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները՝

| Հ/Հ | Ծառայության տեսակ                            | Չափաբաժին 1          |                 |                  |                 |
|-----|----------------------------------------------|----------------------|-----------------|------------------|-----------------|
|     |                                              | 4x4 տիպի Շևրոլե-Նիվա |                 | BMW 523i         |                 |
|     |                                              | Միավորի գին          |                 | Միավորի գին      |                 |
|     |                                              | Թվերով /ՀՀ դրամ/     | Տառերով         | Թվերով /ՀՀ դրամ/ | Տառերով         |
| 1   | 2                                            | 3                    | 4               | 5                | 6               |
| 3.1 | SU-1 ներառվող ծառայությունների անվանում՝     |                      |                 |                  |                 |
| 1   | Բռնկման համակարգի ստուգում                   | 3,000                | երեք հազար դրամ | 5,000            | հինգ հազար դրամ |
| 2   | Սառեցման համակարգի ստուգում                  |                      |                 |                  |                 |
| 3   | Յուղման համակարգի ստուգում                   |                      |                 |                  |                 |
| 4   | Արտացման համակարգի ստուգում                  |                      |                 |                  |                 |
| 5   | Կցորդման համակարգի ստուգում                  |                      |                 |                  |                 |
| 6   | ՓՏ-ի աշխատանքի ստուգում                      |                      |                 |                  |                 |
| 8   | Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում      |                      |                 |                  |                 |
| 9   | Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում              |                      |                 |                  |                 |
| 10  | Առցևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում |                      |                 |                  |                 |
| 11  | Առցևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում   | 3,000                | երեք հազար դրամ | 5,000            | հինգ հազար դրամ |

| 1   | 2                                                        | 3      | 4                      | 5       | 6                      |
|-----|----------------------------------------------------------|--------|------------------------|---------|------------------------|
| 12  | Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում                 |        |                        |         |                        |
| 14  | Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում                  | 3,000  | երեք հազար դրամ        | 5,000   | հինգ հազար դրամ        |
| 15  | Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում                  |        |                        |         |                        |
| 16  | Թափքի վիճակի ստուգում                                    |        |                        |         |                        |
| 17  | Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | 1,000  | մեկ հազար դրամ         | 1,000   | մեկ հազար դրամ         |
| 3.2 | <b>SU-2 ներառվող ծառայությունների անվանում</b>           |        |                        |         |                        |
| 18  | Շարժիչի հանում և տեղադրում                               | 20,000 | քսան հազար դրամ        | 80,000  | ութսուն հազար դրամ     |
| 22  | Շարժիչի վերանորոգում                                     | 50,000 | հիսուն հազար դրամ      | 120,000 | մեկ հարյուր քսան հազար |
| 25  | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում                       | 2,000  | երկու հազար դրամ       | 7,000   | յոթ հազար դրամ         |
| 26  | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում                     | 2,000  | երկու հազար դրամ       | 10,000  | տասը հազար դրամ        |
| 29  | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում                  | 10,000 | տասը հազար դրամ        | 30,000  | երեսուն հազար դրամ     |
| 32  | Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում                    |        |                        |         |                        |
| 33  | Շարժիչի գլխիկի վերանորոգում                              |        |                        |         |                        |
| 34  | Փականի խցուկի փոխարինում                                 |        |                        |         |                        |
| 36  | Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում                         |        |                        |         |                        |
| 39  | Նույնը DOHC դեպքում                                      |        |                        |         |                        |
| 41  | Հրիչների փոխարինում SOHC                                 |        |                        |         |                        |
| 42  | Նույնը DOHC դեպքում                                      |        |                        |         |                        |
| 43  | Ատամնավոր փոկի փոխարինում                                |        |                        |         |                        |
| 44  | Նույնը DOHC դեպքում                                      |        |                        |         |                        |
| 46  | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում                    |        |                        |         |                        |
| 52  | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում                    |        |                        |         |                        |
| 54  | Մխոցային օղակների փոխարինում                             |        |                        |         |                        |
| 55  | Նույնը DOHC դեպքում                                      |        |                        |         |                        |
| 57  | Թափանիկի հանում և տեղադրում                              |        |                        |         |                        |
|     | <i>Ղեկավարման, սեղան և յուղման համակարգ</i>              |        |                        |         |                        |
| 58  | Յուղի և յուղի գտիչի փոխարինում                           | 1,100  | մեկ հազար հարյուր դրամ | 2,000   | երկու հազար դրամ       |
| 59  | Յուղի պոմպի փոխարինում                                   |        |                        |         |                        |
| 62  | Ղեկավարման բլոկի վերանորոգում                            | 10,000 | տասը հազար դրամ        | 25,000  | քսանհինգ հազար դրամ    |
| 63  | Բռնկման կարգավորում                                      |        |                        |         |                        |
| 64  | CO կարգավորում                                           |        |                        |         |                        |
| 65  | խարնարակի հանում և տեղադրում                             |        |                        |         |                        |
| 66  | խարնարակի վերանորոգում                                   |        |                        |         |                        |

| 1  | 2                                              | 3      | 4                   | 5       | 6                      |
|----|------------------------------------------------|--------|---------------------|---------|------------------------|
| 67 | Օդի զտիչի փոխարինում                           | 1,000  | մեկ հազար դրամ      | 2,000   | երկու հազար դրամ       |
| 68 | Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում             | 9,000  | ինը հազար դրամ      | 10,000  | տասը հազար դրամ        |
| 69 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում                | 9,000  | ինը հազար դրամ      | 12,000  | տասներկու հազար դրամ   |
| 70 | Բենզամոդիչի փոխարինում                         | 8,000  | ութ հազար դրամ      | 15,000  | տասնհինգ հազար դրամ    |
| 71 | Վառելիքի զտիչի փոխարինում                      | 8,000  | ութ հազար դրամ      | 5,000   | հինգ հազար դրամ        |
| 72 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում               |        |                     |         |                        |
| 73 | Տրամվորի հանում և տեղադրում                    |        |                     |         |                        |
| 74 | Տրամվորի վերանորոգում                          |        |                     |         |                        |
|    | <i>Ատոնցման և արտածման համակարգ</i>            |        |                     |         |                        |
| 75 | Հոսիարի փոկի հանում և տեղադրում                | 3,000  | երեք հազար դրամ     | 5,000   | հինգ հազար դրամ        |
| 76 | Հոսիարի հանում և տեղադրում                     | 5,000  | հինգ հազար դրամ     | 6,000   | ութ հազար դրամ         |
| 77 | Ռադիատորի հանում և տեղադրում                   | 10,000 | տասը հազար դրամ     | 10,000  | տասը հազար դրամ        |
| 78 | Նույնը կոնդիցիոների դեպքում                    |        |                     |         |                        |
| 80 | Ռադիատորի վերանորոգում                         |        |                     |         |                        |
| 81 | Թերմոստատի փոխարինում                          | 3,000  | երեք հազար դրամ     | 10,000  | տասը հազար դրամ        |
| 82 | Ջրի պոմպի փոխարինում                           | 6,000  | վեց հազար դրամ      | 15,000  | տասնհինգ հազար դրամ    |
| 85 | Ջրի պոմպի վերանորոգում                         |        |                     |         |                        |
| 86 | Նույնը DOHC դեպքում                            |        |                     |         |                        |
| 87 | Նույնը կոնդիցիոների դեպքում                    |        |                     |         |                        |
| 88 | Ընդարձակող բաքի փոխարինում                     | 1,000  | մեկ հազար դրամ      | 4,000   | չորս հազար դրամ        |
| 89 | Խլարարի հանում և տեղադրում                     | 3,000  | երեք հազար դրամ     | 4,000   | չորս հազար դրամ        |
| 90 | Նույնը DOHC դեպքում                            |        |                     |         |                        |
| 91 | Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում           | 2,000  | երկու հազար դրամ    | 2,000   | երկու հազար դրամ       |
|    | <i>Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</i>                      |        |                     |         |                        |
| 92 | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում        | 2,000  | երկու հազար դրամ    | 7,000   | յոթ հազար դրամ         |
| 93 | Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում              |        |                     |         |                        |
| 94 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | 1,000  | մեկ հազար դրամ      | 1,000   | մեկ հազար դրամ         |
| 95 | Կցորդման ուռնակի հանում և տեղադրում            |        |                     |         |                        |
| 97 | ՓՏ-ի հանում և տեղադրում                        | 15,000 | տասնհինգ հազար դրամ | 30,000  | երեսուն հազար դրամ     |
| 98 | ՓՏ-ի վերանորոգում                              | 10,000 | տասը հազար դրամ     | 100,000 | մեկ հարյուր հազար դրամ |

| 1   | 2                                                     | 3      | 4                            | 5      | 6                            |
|-----|-------------------------------------------------------|--------|------------------------------|--------|------------------------------|
| 99  | ՓՏ-ի առանցքակալի փոխարինում                           |        |                              |        |                              |
| 100 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում                       |        |                              |        |                              |
| 101 | ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում                          |        |                              | 10,000 | տասը հազար դրամ              |
|     | <i>Բաշխիչ տրուֆ, կարդանային լիսեռ</i>                 |        |                              |        |                              |
| 110 | Բաշխիչ տրուֆի հանում և տեղադրում                      | 6,000  | վեց հազար դրամ               |        |                              |
| 111 | Բաշխիչ տրուֆի վերանորոգում                            | 8,000  | ութ հազար դրամ               |        |                              |
| 112 | Բաշխիչ տրուֆի խցուկի փոխարինում                       |        |                              |        |                              |
| 113 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում                  | 2,000  | երկու հազար դրամ             | 8,000  | ութ հազար դրամ               |
| 114 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով  |        |                              |        |                              |
| 115 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում          | 2,000  | երկու հազար դրամ             | 2,000  | երկու հազար դրամ             |
| 116 | Կարդանային լիսեռի միջանկյալ կախոցի հանում և տեղադրում |        |                              | 2,000  | երկու հազար դրամ             |
|     | <i>Առջևի և հետևի կամրջակներ</i>                       |        |                              |        |                              |
| 117 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում           | 15,000 | տասնհինգ հազար դրամ          | 20,000 | քսան հազար դրամ              |
| 118 | Առջևի կամ հետևի կամրջակի լիկատար քանդում և հավաքում   | 10,000 | տասը հազար դրամ              | 30,000 | երեսուն հազար դրամ           |
| 119 | Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում   |        |                              |        |                              |
| 120 | Առջևի կամ հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում | 2,500  | երկու հազար հինգ հարյուր     | 5,000  | հինգ հազար դրամ              |
| 121 | Կիսաստնու առանցքակալի փոխարինում                      | 1,000  | մեկ հազար դրամ               | 1,000  | մեկ հազար դրամ               |
|     | <i>Կախոց</i>                                          |        |                              |        |                              |
| 122 | Առջևի կախոցի լիկատար քանդում և հավաքում               |        |                              |        |                              |
| 123 | Տրավերսի հանում և տեղադրում                           | 8,000  | ութ հազար դրամ               | 20,000 | ութ հազար դրամ               |
| 124 | Ձախ կամ աջ հողակալի հանում և տեղադրում                | 6,000  | վեց հազար դրամ               | 6,000  | վեց հազար դրամ               |
| 125 | Անվակունդի առանցքակալի փոխարինում                     | 3,500  | երեք հազար հինգ հարյուր դրամ | 3,500  | երեք հազար հինգ հարյուր դրամ |
| 126 | Անվակունդի հանում և տեղադրում                         | 2,000  | երկու հազար                  | 10,000 | տասը հազար դրամ              |
| 127 | Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում               |        |                              |        |                              |
| 129 | Ձախ կամ աջ հողակալի խցուկների փոխարինում              |        |                              |        |                              |
| 130 | Ձախ կամ աջ հողակալի առանցքակալների փոխարինում         |        |                              |        |                              |
| 131 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում                         |        |                              |        |                              |
| 132 | Ձսպանակի հանում և տեղադրում                           | 3,000  | երեք հազար դրամ              | 5,000  | հինգ հազար դրամ              |

| 1   | 2                                            | 3     | 4                      | 5      | 6                    |
|-----|----------------------------------------------|-------|------------------------|--------|----------------------|
| 133 | Ձսպակի հանում և տեղադրում                    |       |                        |        |                      |
| 134 | Ձսպակի վրանների փոխարինում                   |       |                        |        |                      |
| 135 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում         | 1,500 | մեկ հազար հինգ հարյուր | 5,000  | հինգ հազար դրամ      |
| 136 | Ներքևի լծակի հանում և տեղադրում              | 4,000 | չորս հազար դրամ        | 6,000  | վեց հազար դրամ       |
| 137 | Ներքևի լծակի վրանների փոխարինում             | 1,000 | մեկ հազար դրամ         | 2,000  | երկու հազար դրամ     |
| 138 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | 2,000 | երկու հազար դրամ       | 5,000  | հինգ հազար դրամ      |
| 139 | Միջին ձգանի հանում և տեղադրում               | 2,000 | երկու հազար դրամ       | 5,000  | հինգ հազար դրամ      |
| 140 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում         | 1,500 | մեկ հազար հինգ հարյուր | 5,000  | հինգ հազար դրամ      |
| 141 | Վերևի լծակի հանում և տեղադրում               | 2,000 | երկու հազար դրամ       | 5,000  | հինգ հազար դրամ      |
| 142 | Վերևի լծակի վրանների փոխարինում              | 1,000 | մեկ հազար դրամ         | 2,000  | երկու հազար դրամ     |
| 143 | Գնդե հողակապերի փոխարինում                   | 1,500 | մեկ հազար հինգ հարյուր | 5,000  | հինգ հազար դրամ      |
| 144 | Ծայրականների հանում և տեղադրում              | 1,000 | մեկ հազար դրամ         | 4,000  | չորս հազար դրամ      |
| 145 | Առջևի կայունարարի հանում և տեղադրում         | 2,000 | երկու հազար դրամ       | 6,000  | վեց հազար դրամ       |
| 146 | Առջևի կայունարարի վրանների փոխարինում        | 1,000 | մեկ հազար դրամ         | 4,000  | չորս հազար դրամ      |
| 147 | Առջևի կայունարարի առջևի վրանների փոխարինում  |       |                        |        |                      |
| 148 | Հետևի զսպանակի փոխարինում                    |       |                        |        |                      |
| 149 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում         | 1,500 | մեկ հազար հինգ հարյուր | 7,000  | յոթ հազար դրամ       |
| 150 | Հետևի ձգածողի հանում և տեղադրում             |       |                        |        |                      |
| 151 | Հետևի երկաթածողի հանում և տեղադրում          | 1,000 | մեկ հազար դրամ         | 4,000  | չորս հազար դրամ      |
| 152 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում   |       |                        | 3,000  | երեք հազար դրամ      |
| 153 | Անվարացքի կարագավորում                       | 6,000 | վեց հազար դրամ         | 12,000 | տասներկու հազար դրամ |
|     | <i>Ղեկային մեխանիզմ</i>                      |       |                        |        |                      |
| 157 | Ղեկային կայունի հանում և տեղադրում           | 7,000 | յոթ հազար դրամ         | 15,000 | տասնհինգ հազար դրամ  |
| 159 | Ղեկային կայունի վերանորոգում                 | 8,000 | ութ հազար դրամ         | 50,000 | հիսուն հազար դրամ    |
| 160 | ՂԿ-ի առանցքակալի և/կամ վրանների փոխարինում   |       |                        |        |                      |
| 161 | ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում           |       |                        |        |                      |
|     | <i>Արգելաձային համակարգ</i>                  |       |                        |        |                      |
| 171 | Գլխ. գլանի հանում և տեղադրում                | 3,000 | երեք հազար դրամ        | 8,000  | ութ հազար դրամ       |
| 172 | Գլխ. գլանի վերանորոգում                      |       |                        |        |                      |

| 1   | 2                                                        | 3     | 4                        | 5      | 6                |
|-----|----------------------------------------------------------|-------|--------------------------|--------|------------------|
| 173 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում               | 8,000 | ույթ հազար դրամ          | 10,000 | տասը հազար դրամ  |
| 174 | Բանվ. գլանի հանում և տեղադրում                           | 2,500 | երկու հազար հինգ հարյուր | 2,000  | երկու հազար դրամ |
| 175 | Բանվ. գլանի վերանորոգում                                 |       |                          |        |                  |
| 176 | Արգելակային համակարգի օդահանում                          | 2,000 | երկու հազար դրամ         | 2,000  | երկու հազար դրամ |
| 177 | Առջևի սուապորտի հանում և տեղադրում                       | 2,000 | երկու հազար դրամ         | 4,000  | չորս հազար դրամ  |
| 179 | Առջևի սուապորտի վերանորոգում                             |       |                          |        |                  |
| 180 | Հետևի սուապորտի հանում և տեղադրում                       |       |                          | 4,000  | չորս հազար դրամ  |
| 181 | Արգելակային փողրակի փոխարինում                           | 2,000 | երկու հազար դրամ         | 3,000  | երեք հազար դրամ  |
| 182 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում                  | 2,000 | երկու հազար դրամ         | 4,000  | չորս հազար դրամ  |
| 184 | Հետևի կոճղակների փոխարինում                              | 3,000 | երեք հազար դրամ          | 4,000  | չորս հազար դրամ  |
| 185 | Առջևի արգելակային սկավառակի փոխարինում                   | 2,000 | երկու հազար դրամ         | 5,000  | հինգ հազար դրամ  |
| 186 | Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում տեղադրում | 1,000 | մեկ հազար դրամ           | 5,000  | հինգ հազար դրամ  |
| 187 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում                   |       |                          |        |                  |
| 190 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում                 | 4,000 | չորս հազար դրամ          | 8,000  | ույթ հազար դրամ  |
| 191 | Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում                    |       |                          |        |                  |
|     | <i>Էլեկտրասարքավորում</i>                                |       |                          |        |                  |
| 192 | Էլեկտրասարքավորման վերանորոգում                          | 1,000 | մեկ հազար դրամ           | 1,000  | մեկ հազար դրամ   |
| 193 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում                         | 3,000 | երեք հազար դրամ          | 10,000 | տասը հազար դրամ  |
| 194 | Գններատորի հանում և տեղադրում                            | 3,000 | երեք հազար դրամ          | 10,000 | տասը հազար դրամ  |
| 196 | Եռփուլի հիդրոուժեղարարի ղեաքում                          |       |                          |        |                  |
| 197 | Գններատորի վերանորոգում                                  | 5,000 | հինգ հազար դրամ          | 10,000 | տասը հազար դրամ  |
| 198 | Մեկնարկիչի հանում և տեղադրում                            | 3,000 | երեք հազար դրամ          | 8,000  | ույթ հազար դրամ  |
| 199 | Մեկնարկիչի վերանորոգում                                  | 5,000 | հինգ հազար դրամ          | 10,000 | տասը հազար դրամ  |
| 200 | Առջևի լապտերի հանում և տեղադրում                         |       |                          |        |                  |
| 201 | Հետևի լապտերի հանում և տեղադրում                         |       |                          |        |                  |
| 202 | Բռնկման կոդյաքի հանում և տեղադրում                       | 5,000 | հինգ հազար դրամ          | 7,000  | յույթ հազար դրամ |
| 203 | Վազքաչափի հանում և տեղադրում                             |       |                          |        |                  |
| 204 | Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում                      | 4,000 | չորս հազար դրամ          |        |                  |

| 1   | 2                                                                                             | 3     | 4                           | 5      | 6                  |
|-----|-----------------------------------------------------------------------------------------------|-------|-----------------------------|--------|--------------------|
| 205 | Սաքերի պանեյի հանում և տեղադրում                                                              |       |                             |        |                    |
| 206 | Արագաչափի հանում և տեղադրում                                                                  |       |                             |        |                    |
| 207 | Ազդանշանի հանում և տեղադրում                                                                  | 1,000 | մեկ հազար դրամ              | 2,000  | երկու հազար դրամ   |
| 208 | Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում                                                        | 6,000 | վեց հազար դրամ              | 8,000  | ութ հազար դրամ     |
| 209 | Դոների կենտրոնական փականի հանում և տեղադրում                                                  |       |                             |        |                    |
| 210 | Ազդանշալային համակարգի տեղադրում                                                              |       |                             |        |                    |
| 211 | Մագնիտոլայի տեղադրում                                                                         |       |                             |        |                    |
| 212 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում                                                          | 1,000 | մեկ հազար դրամ              | 6,000  | վեց հազար դրամ     |
| 213 | Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում                                                         |       |                             |        |                    |
| 214 | Էլ/հաղորդալարերի հիմնական խտրցի հանում և տեղադրում                                            | 1,000 | մեկ հազար դրամ              | 1,000  | մեկ հազար դրամ     |
| 215 | Էլ/հաղորդալարերի երկրորդային խտրցի հանում և տեղադրում                                         | 1,000 | մեկ հազար դրամ              | 1,000  | մեկ հազար դրամ     |
| 216 | Էլեկտրական տվիչների փոխարինում                                                                | 2,000 | երկու հազար դրամ            | 3,000  | երեք հազար դրամ    |
| 217 | Էլեկտրական անջատիչների փոխարինում                                                             | 2,000 | երկու հազար դրամ            | 2,000  | երկու հազար դրամ   |
| 218 | Վառոցքի մոմերի փոխարինում                                                                     | 1,500 | մեկ հազար հինգ հարյուր դրամ | 10,000 | տասը հազար դրամ    |
| 219 | Կոնդիցիոնների լիցքավորում                                                                     |       |                             | 18,000 | տասնութ հազար դրամ |
| 220 | Կոնդիցիոնների վերանորոգում                                                                    |       |                             |        |                    |
|     | <i>Այլ ծառայություններ</i>                                                                    |       |                             |        |                    |
| 221 | Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում                                                           |       |                             |        |                    |
| 222 | Ավտոմեքենայի վազում                                                                           | 3,000 | երեք հազար դրամ             | 3,000  | երեք հազար դրամ    |
| 223 | Անիվի հանում և տեղադրում                                                                      |       |                             |        |                    |
| 224 | Անվաղողի վերանորոգում                                                                         | 1,000 | մեկ հազար դրամ              | 1,000  | մեկ հազար դրամ     |
| 225 | Անիվի բայանսավորում                                                                           | 1,000 | մեկ հազար դրամ              | 1,000  | մեկ հազար դրամ     |
| 226 | Անիվի վազ                                                                                     |       |                             |        |                    |
| 227 | CO-զոդման աշխատանքներ, <i>գին 1 քառ.սմ - ի համար</i>                                          | 1,000 | մեկ հազար դրամ              | 1,000  | մեկ հազար դրամ     |
| 228 | Խառատային աշխատանքներ                                                                         | 1,000 | մեկ հազար դրամ              | 1,000  | մեկ հազար դրամ     |
| 229 | Փականագործի աշխատանքներ                                                                       | 1,000 | մեկ հազար դրամ              | 1,000  | մեկ հազար դրամ     |
| 230 | Բարշարկի ծառայություն <i>գին 1կմ. համար</i>                                                   | 500   | հինգ հարյուր դրամ           | 500    | հինգ հարյուր դրամ  |
| 3.3 | <b>SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները</b> |       |                             |        |                    |

